ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ с.АРЗНИ

Կոտայքի մարզ գ.Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 6
համայնքապետարանի վարչական շենք
Հեռ. /0222 /94-8-80, էլ .փոստ: arzni.kotayq@mta.qov.am

Котайкский марз, село Арзни улица 5 переулок-1
№6 управления муниципалитета
Тел. /0222 /94-8-80, эл. почта: arzni.kotayq@mta.qov.am

հ/պ-131
26 դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Կոտայքի մարզպետ

պարոն Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Համաձայն «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները, ներկայացվում է Արզնի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 4 արտահերթ նիստի որոշումը :

Համայնքի ղեկավար Վ.Վենիամինով

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի №58

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ №4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

## ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջը:

Համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել՝ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի №4 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

2.Արզնի համայնքի աղբահանման աշխատանքների կազմակերպման համար տնտեսություններից վարձավճար գանձելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի 2017 թվականի աշխատավարձի չափը հաստատելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքապետարանի 2017 թվականի աշխատակազմի թվաքանակը,հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի «ԱԼՅՈՆՈՒՇԿԱ մանկապարտեզ» -ի ՆՈՒՀՀՈԱԿ 2017 թվականի աշխատակիցների թվաքանակը հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի 2017 թվականի ավագանու նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի 2017 թվականի բյուջեի նախագծի հաստատման մասին:

Կողմ (9 ), Դեմ ( 0 ), Ձեռնպահ ( 0 ),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի №59 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով:

Համայնքի ավագանին **որոշում է**

Սահմանել՝ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

Կողմ (9 ), Դեմ ( 0 ), Ձեռնպահ ( 0 ),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ԶԱՒԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

Հավելված
Արզնի համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 59-Ն որոշման

| N | Տեղական տուրքի և վճարի տեսակը | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը ՀՀ դրամով |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝<br>1) հիմնական օբյեկտների համար՝<br>Տեղական տուրքը | |
| | ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ. | 7500 |
| | բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | |
| | գ. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ, | 15000 |
| | դ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ, | 25000 |
| | ե. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50 000 դրամ, | 35000 |
| | զ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100 000 դրամ. | 50000 |
| | 2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | |
| | ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ, | 1500 |
| | բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 5000 դրամ: | 2500 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |

| | | |
|---|---|---|
| | 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 3000 դրամ. | 1500 |
| | 2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | |
| | 3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ: | 2500 |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝<br>1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10.001 դրամ, | 5000 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 13.001 դրամ, | 7000 |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 20.001 դրամ, | 8000 |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 25.001 դրամ, | 10000 |

| | | |
|---|---|---|
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 45.001 դրամ, | 20000 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 100.001 դրամ: | 40000 |
| | 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10.001 դրամ, | 4000 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 13.001 դրամ, | 5000 |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 20.001 դրամ, | 7000 |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 25.001 դրամ, | 10000 |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 45.001 դրամ, | 15000 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 100.001 դրամ: | 30000 |
| 5. | Համայնքի տարածքում՝ | |
| | 1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար. | 200 |
| | 2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000-200 000 դրամ. | 200000 |
| | 3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման | |

| | | |
|---|---|---|
| | ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000-60 000 դրամ. | 30000 |
| | 4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | |
| | հիմնական շինությունների ներսում՝ | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 5.001 դրամ, | 1500 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 10.001 դրամ, | 3000 |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 15.001 դրամ, | 5000 |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 20.001 դրամ, | 7000 |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 30.001 դրամ, | 10000 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 50.001 դրամ, | 15000 |
| | ոչ հիմնական շինությունների ներսում՝ | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 1.001 դրամ, | 500 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 2.001 դրամ, | 1000 |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 4.001 դրամ, | 2000 |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 8.001 դրամ, | 4000 |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 15.001 դրամ, | 8000 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 25.001 դրամ: | 10000 |
| | 5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային | |

| | | |
|---|---|---|
| | բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000-100 000 դրամ. | 50 000 |
| | 6) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000-20 000 դրամ: | 10 000 |
| 6. | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ: | 50 000 |
| 7. | Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | |
| | 1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000-50 000 դրամ. | 25000 |
| | 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000-100 000 դրամ. | 50000 |
| | 3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000-500 000 դրամ. | 200000 |
| | 4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000-1 000 000 դրամ. | 500000 |
| | 5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000-500 000 դրամ. | 250000 |
| | 6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000-150 000 դրամ: | 100000 |
| 8. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000-2000 դրամ. | 1000 |

| | | |
|---|---|---|
| | 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500-3500 դրամ.<br><br>3) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ.<br><br>4) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ: | 2500<br><br>500 |
| 9. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:<br><br>Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:<br><br>Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղականտուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ: | 700<br><br>150<br><br>2000 |
| 10. | Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000-100 000 դրամ: | 50000 |
| 11. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ: | 10000 |
| 12. | Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 - 500 000 դրամ: | 50000 |
| 13. | Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝<br><br>1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ. | <br><br>1 000 000 |

| | | |
|---|---|---|
| | 2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ. | *2 500 000* |
| | 3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ. | *3 500 000* |
| | 4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ | *5 000 000* |
| *14.* | *Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար* | *5000* |
| *15.* | *Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝* | *3000* |
| *16.* | *Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝* | *3000* |
| *17.* | *Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝*<br><br>*Աղբահանության վճար.*<br><br>*1)ֆիզիկական անձանց համար /փաստացի բնակվող/՝ սահմանել ամսեկան 1 շնչի համար* | *100* |
| | *2)Արտադրական և առևտրային կազմակերպությունների աղբահանության վարձավճարի չափը սահմանել ամսեկան 1ք/մ-ի համար* | *15* |
| | *3)Պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար աղբահանության վարձավճարի չափը սահմանել ամսեկան 1խ.մ –ի համար* | *1500* |
| | *4)Պետական առևտրային կազմակերպությունների համար աղբահանության վարձավճարի չափը սահմանել ամսեկան 1խ.մ համար* | *2000* |

| | | |
|---|---|---|
| 18. | 5)Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝1 տ-ի համար<br><br>Համայնքի տարածքում գտնվող հողամասերի հատակագծերը հաստատելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել | 2500<br><br>3 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀ Լ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի № 60-Ն

## ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՎԱՐՁԱՎՃԱՐ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին **որոշում է՝**

2017 թվականի համայնքի աղբահանման աշխատանքների կազմակերպման համար առկա տնտեսություններից ըստ հացեի և բնակվելու ժամանակահատվածի համար փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչից գանձել ամենամյա վարձավճար 100 /հարյուր/ դրամի չափով:

Կողմ (9 ), Դեմ ( 0 ), Ձեռնպահ ( 0 ),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի № 61-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով:

Համայնքի ավագանին **որոշում է՝**

Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի 2017 թվականի աշխատավարձի չափը սահմանել՝ 320000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

Կողմ (9 ), Դեմ ( 0 ), Ձեռնպահ ( 0 ),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ՔԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի №62-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով:

Համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել՝ 2017 թվականի Կոտայքի մարզի Արզնի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը,հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

Կողմ (9), Դեմ (0), Ձեռնպահ (0),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

Հավելված
Արգնի համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 62-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Արգնիի համայնքապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 16

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Դրույքը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | | 1 | 1 | 320000 | | | 320000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | | 1 | 1 | 223000 | | | 223000 |
| 3 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 1 | 227500 | | 22750 | 250250 |
| 4 | | Գլխավոր մասնագետ-հաշվապահ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 1 | 223000 | | 22300 | 245300 |
| 5 | | 1-ին կարգի մասնագետ-գանձապահ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 1 | 112000 | | | 112000 |
| 6 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-2 | 1 | 1 | 112000 | | | 112000 |
| 7 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-2 | 1 | 1 | 85000 | | | 85000 |
| 8 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-3 | 1 | 1 | 85000 | | | 85000 |
| 9 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-1 | 1 | 1 | 85000 | | | 85000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 1 | 73600 | | | 73600 |
| 11 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 1 | 73600 | | | 73600 |
| 12 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 1 | 73600 | | | 73600 |
| 13 | | Միկրոավտոբուսի վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 1 | 73600 | | | 73600 |
| 14 | | Աղբահանման մեքենայի վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 1 | 73600 | | | 73600 |
| 15 | | Աղբահանության բանվոր | Տեխնիկական սպասարկման | | 1 | 1 | 73600 | | | 73600 |
| 16 | | Խմելու ջրի փականագործ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 1 | 73600 | | | 73600 |
| | Ընդամենը | | | | 16 | 16 | | | | 2032750 |

Համայնքի ղեկավար Վ.Վենիամինով

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի №63 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԼՅՈՆՈՒՇԿԱ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»-ի ՆՈՒՀՀՈԱԿ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել՝ Կոտայքի մարզի Արզնի համայնքի «ԱԼՅՈՆՈՒՇԿԱ մանկապարտեզ»-ի ՆՈՒՀՀՈԱԿ 2017 թվականի աշխատակիցների թվաքանակը,հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-6-7-րդ հոդվածները և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,1974 թվականին և հետո ծնված աշխատակիցների համար նվազագույն ամսական աշխատավարձը կիրառել 77904 դրամ:

Կողմ (9 ), Դեմ ( 0 ), Ձեռնպահ ( 0 ),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

Հավելված
Արզնիի համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 23-ի N63 -Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Արզնիի <ԱԼՅՈՆՈՒՇԿԱ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 16

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Արզնիի <ԱԼՅՈՆՈՒՇԿԱ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> | Տնօրեն | | | 1 | 118000 | | | 118000 |
| 2 | | Հաշվապահ | | | 1 | 92600 | | | 46300 |
| 3 | | Տնտեսվար | | | 1 | 107200 | | | 53600 |
| 4 | | Գործավար | | | 1 | 98000 | | | 49000 |
| 5 | | Դաստիրակ | | | 2 | 82700 | | | 185248 |
| 6 | | Դաստիրակի օգնական | | | 2 | 72760 | | | 145520 |
| 7 | | Բուժ. քույր | | | 1 | 74200 | | | 37100 |
| 8 | | Երաժշտության դասատու /պարուսույց/ | | | 1 | 92600 | | | 92600 |
| 9 | | Խոհարար | | | 1 | 72760 | | | 72760 |
| 10 | | Խոհարարի օգնական | | | 1 | 74200 | | | 37100 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | | Լվացարար | | | 1 | 72760 | | | 36380 |
| 12 | | Հավաքարար | | | 1 | 72760 | | | 72760 |
| 13 | | Պահակ | | | 2 | 72760 | | | 145520 |
| | Ընդամենը | | | | 16 | | | | 1091888 |

Համայնքի ղեկավար Վ.Վենիամինով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի № 64

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով:

Համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի 2017 թվականի ավագանու նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (9 ), Դեմ ( 0 ), Ձեռնպահ ( 0 ),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

Հավելված

Կոտայքի մարզի Արզնի համայնքի ավագանու

2016թ-ի դեկտեմբերի 23-ի N 64 որոշման

## Ավագանու նիստերի ժամանակացույց իրավական ակտերով սահմանված պարտադիր ժամկետներով պայմանավորված

| Ամիսը | Համայնքի ավագանու նիստի օրը | Համայնքի ավագանու օրակարգային հարցեր |
|---|---|---|
| Հունվար | ամսվա 2-րդ կամ 3-րդ հինգշաբթի օրը | համայնքի բյուջեի 4-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում, |
| | | աղբահանման աշխատանքների կազմակերպման տնտեսություններից վարձավճար գանձելու մասին, |
| Փետրվար | | |
| Մարտ | ամսվա 2-րդ կամ 3-րդ հինգշաբթի օրը | համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին: |
| | | համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն |
| Ապրիլ | | համայնքի բյուջեի 1-ին եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում |
| Մայիս | ամսվա 2-րդ կամ 3-րդ հինգշաբթի օրը | |
| Հունիս | | |
| Հուլիս | ամսվա 2-րդ կամ 3-րդ հինգշաբթի օրը | բյուջեի 2-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում, |
| | | համաձայնություն հողային հաշվեկշռին |

| | | |
|---|---|---|
| | | |
| Օգոստոս | | |
| Սեպտեմբեր | ամսվա 2-րդ կամ 3-րդ հինգշաբթի օրը | |
| Հոկտեմբեր | | համայնքի բյուջեի 3-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում |
| Նոյեմբեր | ամսվա 2-րդ կամ 3-րդ հինգշաբթի օր | |
| Դեկտեմբեր | | տեղական հարկերի, տուրքերի և ճարների դրույքաչափերի սահմանման մասին,<br>համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին, |
| | | համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին, |
| | | Հաջորդ տարվա բյուջեի հաստատում, |
| | | Հաջորդ տարվա ավագանու նիստերի ժամանակացույցի հաստատում |

Համայնքի ղեկավար Վ.Վենիամինով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի № 65-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով,

Համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել՝ Կոտայքի մարզի Արզնի համայնքի 2017 թվականի բյուջեի նախագիծը, համաձայն հավելվածի:

Կողմ (9), Դեմ (0), Ձեռնպահ (0),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ